ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ---------------------------------------

«03» սեպտեմբերի -------2021թ.

Արմավիրի մարզ

<<Նորակերտի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

2021 -2022 ուստարի

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

IVա դասարան

Դասվար՝ Ե. Աթարակայան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

4-րդ դասարանը բաղկացած է 20 *աշակերտներից, որից՝ 13-ը տղա, 7-աղջիկ: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, ընկերասեր և պարտաճանաչ: Երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Ուսուցիչների և դասղեկի կողմից հետևողական աշխատանքներ են տարվում բարձրացնելու դասարանի ուսման առաջադիմությունը:*

*2.*Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում *Դաստիարակությունը դպրոցական կրթության կարևոր բաղադրիչ է, որի հիմնական խնդիրներն են՝ սովորողների մեջ քաղաքացիական պատասխանատվության և իրավական գիտակցության ձևավորումը, հոգևոր դաստիարակությունը, նախաձեռնության, ինքնուրույնության, հանդուրժողականության խթանումը, ինչպես նաև հասարակության մեջ ինտեգրվելուն նպաստելը: Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը, պահպանել ծնող-աշակերտ-դպրոց կապը: Աշխատանքներ տանել ծնողկոմիտեի անդամների հետ: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատե լառանձին, որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն: *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:Անցկացնել զրույցներ հոգևոր տոների մասին, դասարանական միջոցառումներ:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն: *Գեղեցիկի հետ առնչվելու և հոգևոր կուլտուրայով զբաղվելու իրավունքը դաստիարակության կարևորագույն տարրերից մեկն է: Գեղագիտական դաստիարակության համակարգը ընդգրկում է սավորողի ուսումնական գործունեությունը, արտադասարանային և արտադպրոցական աշխատանքները, գեղագիտական դաստիարակությունն ընտանիքում, ինքնադաստիարակությունը: Գեղագիտական դաստիարակության ձևերն են՝ զրույց, դասախոսություն, պոեզիայի երեկո, հանդիպումներ: Աշակերտների մոտ ձևավորել էսթետիկական կուլտուրա:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն: *Ռազմահայրենասիրական դաստիարակություն ըբազմաշերտ, նպատակաուղղված, անընդմեջ, համակարգված գործընթաց*

է՝ ուղղված մատաղ սերնդի հայրենասիրական, քաղաքացիական պարտքի, հայրենիքին նվիրվածության և հավատարմության դաստիարակմանը: Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Կազմակերպել հանդիպումներ և զրույցներ համագործակցող զորամասի սպաների հետ :

3.4 Ֆիզիկական դաստիարակություն:*Ֆիզիկական դաստիարակությունը բնակչության նառողջության ամրապնդմանը, աշխատունակության բարձրացմանը և երկարակեցությանը, ֆիզիկապես կոփված և բարոյապես կայուն սերնդի ձևավորմանն ուղղված կազմակերպված գործընթաց է: Ֆիզիկական դաստիարակության առանցքը<<առողջ հոգին առողջ մարմնում>>դրույթն է, իսկ դրա գրավականներն են՝ զբոսանքները, շրջագայությունները, ֆիզիկական աշխատանքը, մարզումը, վարժություններն ու խաղերը:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն: *Աշխատանքային դաստիարակությունը բազմակողմանի գործընթաց է՝ ուղղված երեխայի մոտ աշխատանքի նկատմամբ հայացքներ, գաղափարներ, աշխատասիրություն դաստիարակելուն, աշխատանքային կարողություններ և հմտություններ ձևավորելուն և զարգացնելուն: Աշխատանքային դաստիարակության խնդիրներն են երեխայի մոտ աշխատանքի նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, նյութական արժեքների պահպանման, աշխատելու պահանջ և ձգտում ունենալու դաստիարակումը: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպիմաշխատանքը, աշխատավոր մարդը:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն: *Էկոլոգիական դաստիարակությունը շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված, անընդմեջ, համակարգված գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, դրսևորել բարոյական վարքագիծ բնության հետ փոխներգործության ընթացքում: Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:*

4. Դպրոց-ընտանիք կապը: *Հանրակրթական դպրոցի և ծնողների միջև ամրապնդել կապը մանկավարժական աշխատանքների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցերում միասնական պահանջներ ձևավորելով: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց- ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն: Հաճախակի հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը, պահպանել ծնող-աշակերտ-դպրոց կապը: Աշխատանքներ տանել ծնողկոմիտեի անդամների հետ:*

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
1	Զրույց «Ուսումնառության ներքին կարգապահական կանոնները» թեմայով: Նպատակը աշակերտներին մեջ ձևավորել կարգապահական պատասխանատվություն:	սեպտեմբեր 1-3	աշակերտ դասղեկ
2	Զրույց «հանդուրժողականության» մասին: Նպատակը՝ աշակերտների մեջ սերմանել հանդուրժողականություն:	սեպտեմբեր 6-10	աշակերտ դասղեկ
3	«ՀՀ խորհրդանիշներ, անկախության ուղղին» թեմայով զրույց: Նպատակն է աշակերտներին ներկայացնել ՀՀ անկախության և ձևավորման ուղին:	սեպտեմբեր 13-17	աշակերտ դասղեկ
4	Առողջ ապրելակերպ թեմայով զրույց:Նպատակը՝ գիտելիքների խորացում առողջ ապրելակերպի շուրջ	սեպտեմբեր 22-25	աշակերտ դասղեկ
5	«Ովքեր են իմ ընկերները» թեմայով զրույց: Նպատակը՝ ինչն են կարևորում ընկերության մեջ	սեպտեմբեր 27-1	աշակերտ դասղեկ
6	«Իմ ուսուցիչ» թեմայով զրույց: Նպատակը՝ սեր և հարգանք սերմանել դեպի ուսուցիչը:	հոկտեմբեր 4-8	աշակերտ դասղեկ հոգեբան
7	«Անվտանգ երթևեկության կանոնների հիշեցում» թեմայով զրույց:	հոկտեմբեր 11-15	աշակերտ դասղեկ
8	«Մենք Հայկի թոռներն ենք» թեմայով զրույց: Նպատակը՝ հայրենասիրության դաստիարակում:	հոկտեմբեր 18-22	աշակերտ դասղեկ
9	«Դպրոցական դասագրքերի և աշակերտական պիտույքների վիճակի ստուգում»	նոյեմբեր 1-5	աշակերտ դասղեկ
10	«Բջջային հեռախոսների վտանգավոր ազդեցությունը» թեմայով զրույց: Նպատակը՝ իմանալ վտանգավորության աստիճանը:	նոյեմբեր 8-12	աշակերտ դասղեկ
11	«Սովորենք իրար հասկանալ» թեմայով զրույց: Նպատակը՝պահպանել վարվեցողության կանոնները:	նոյեմբեր 15-19	աշակերտ դասղեկ
12	«Մեր ընտանի կենդանիները» թեմայով զրույց: Նպատակը՝ ճանաչողական արժեքների ձևավորում	նոյեմբեր 22-26	աշակերտ դասղեկ
13	Բնական աղետներ»թեմայով զրույց: Նպատակը՝ ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:	դեկտեմբեր 29-3	աշակերտ դասղեկ
14	«Խնդիրների համատեղ լուծում, որուշումների կայացում»: Նպատակը՝ աշակերտների մոտ ձևավորել ընկերասիրություն և ինքնուրույնություն	դեկտեմբեր 6-10	աշակերտ դասղեկ

15	Նախապատրաստվել ձմեռային արձակուրդին	դեկտեմբեր 13-17	աշակերտ դասղեկ
16	«Համագործակցություն»նպատակը՝ աշակերտների մեջ սերմանել ընկերասիրություն , հանդուրժողականություն:	Դեկտեմբեր 20-24	աշակերտ դասղեկ
17	«Հայրենիքը սկսվում է իմ տնից» թեմայով զրույց: Նպատակը՝ հայրենասիրության ձևավորում:	հունվար 10-14	աշակերտ դասղեկ
18	Անձնական ես-ի ընկալում» թեմայով զրույց: Նպատակը՝ աշակերտների մոտ ձևավորել ինքնագնահատման ընկալում:	հունվարի 17-21	աշակերտ դասղեկ
19	«Իրավունք և պարտականություն» թեմայով զրույց: Նպատակը ՝գիտակցել դրանց անհրաժեշտությունը:	հունվարի 24-28	աշակերտ դասղեկ
20	«Եկեղեցին և ազգը: քննարկման միջոցով աշակերտների մեջ հիմնավորել եկեղեցու դերը հայ իրականության մեջ:	փետրվարի 31-4	աշակերտ դասղեկ
21	Վատ սովորություններ:Ինչպես այքարել դրանց դեմ:	փետրվարի 14-18	
22	«Ինքնագնահատում» թեմայով զրույց: Նպատակը՝ աշակերտների մոտ ձևավորելու ,արժևորելու և գնահատելու իր ես-ը:	փետրվարի 21-25	աշակերտ դասղեկ
23	«Ինքնագնահատում» թեմայով զրույց: Նպատակը՝ ճշգրիտ օգտվել օրվա ռեժիմից:	փետրվարի 28-4	աշակերտ դասղեկ
24	«Արդար ,ազնիվ ,օրինապահ քաղաքացի» թեմայով զրույց: Նպատակը ՝արդարության, ազնվության ձևավորում:	մարտ 7-12	աշակերտ դասղեկ
25	«Ինչ է խաղաղությունը» թեմայով զրույց: Նպատակը՝ծանոթանալ խաղաղության մասին մի քանի տեսակետների:	մարտ 14-18	աշակերտ դասղեկ
26	«Պետք է արդյոք խնայել» թեմայով զրույց: Նպա տակը՝ աշակերտների մեջ ձևավորել էկոլոգիական դաստիարակություն	մարտի 28-1	աշակերտ դասղեկ
27	«Հայոց մեծ եղեռն» թեմայով զրույց: Նպատակը՝ աշակերտներին ծանոթացնել ցեղասպանության մեկ դարյա պատմության հետ:	ապրիլի 4-8	աշակերտ դասղեկ
28	Ինչ է կոնֆլիկտը:Նպատակը՝ վերլուծել կոնֆլիկտի դրական և բացասական նշանակությունը	ապրիլի 11-15	աշակերտ դասղեկ
29	Ընդլայնել երեխայի հետաքրքրությունների շրջանակը	ապրիլի 18-22	աշակերտ դասղեկ
30	Մեր ազգային հերոսները:Հայրենասիրության	ապրիլի	աշակերտ

	դաստիարակում	25-29	դասղեկ
31	<<Մեր կարողացածի չափով>>: Օգնել գիտակցել,որ խտրականությունն ու անարդարությունը կասեցնելու լավագույն միջոցն այն չհանդուրժելն է:	մայիսի 2-6	աշակերտ դասղեկ
32	<<Ազգային զարթոնք>>:Աշակերտների մեջ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ	մայիս 9-13	աշակերտ դասղեկ
33	Դասագրքերը նախապատրաստել դպրոցի գրադարանին հանձնելու	մայիս 16-20	աշակերտդասղեկ
34	Օգնություն ծնողներին ամառային արձակուրդին	մայիս 23-27	դասղեկ